ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ԹԻՎ 1 ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ք .Ասկերան Շահումյան 65
(010) 28-58-13, 0476 77-2- 65

N 74/514-14

<< 29 >> 04 2014թ.

Թիվ 90955212 քրեական գործով տուժողի իրավահաջորդ Մերուժան Կալեյանի ներկայացուցիչ Արթուր Սաքունցին
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Ձեր դիմումի համաձայն ուղարկում եմ 30.07.2013թ. հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշման պատճենը:

Առդիր՝ որոշումը << 1 >> թերթից:

ԹԻՎ 1 ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԴԱՏԱԽԱԶ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
1-ԻՆ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ն.Ս.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

90960513

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«16» օգոստոսի 2013թ. ք.Ստեփանակերտ

ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Ն.Ավետիսյանս վերանայելով թիվ Ն104/13Ա նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ 90955212 քրեական գործով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Արթուր Սաքունցը հանցագործության մասին գրավոր հաղորդում է տվել այն մասին, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. հուլիսի 03-ի դատաքննության ժամանակ, թիվ 90955212 քրեական գործով վկա, ՊԲ 35383 զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Արման Վալերիկի Բոզոյանը հայտարարել է, որ 2012թ. սեպտեմբերի 06-ից մինչև սեպտեմբերի 07-ը գտնվել է Ստեփանակերտի ՌՈ բաժնում, որտեղ սպաների կողմից իր նկատմաբ բռնություն է գործադրվել և անձի արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ հնչեցվել:

Նկատի ունենալով, որ նշված փաստում առկա են ՀՀ քր. օր-ի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, և որ ՀՀ քր. դատ. օր-ի 187-188-րդ հոդվածների համաձայն բոլոր գործերով նախաքննությունը պարտադիր է, ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 27-րդ, 175-176-րդ հոդվածներով, 181-րդ հոդ. 1-ին կետով, 182-րդ հոդվածով, 187-րդ հոդ. 2-րդ կետով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Փաստի առթիվ հարուցել քրեական գործ՝ ՀՀ քր. օր-ի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, այն ընդունել վարույթ և կատարել նախաքննություն:
2. Որոշման մասին հայտնել շահագրգիռ անձանց:
3. Որոշման պատճենն ուղարկել թիվ 1 կայազորի զինվորական դատախազին:

ՔՆՆԻՉ Ն.Ռ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Որոշման պատճենը թիվ 1 կայազորին զինվորական դատախազին է ուղարկվել «16» օգոստոսի 2013թ.:

ՔՆՆԻՉ Ն.Ռ.ԱՎԵՏԻՍՅԱՆ